և Քաղաքապետն, այլ ընկալաւ զարժանաւոր պատասխանիս։ և զկնի աւուրց ինչ հազիւ ուրեմն ցածուցին զխըստութիւն Դատաւորին և չինեալ աւարտեցին զպահարանն և կանգնեցին զխաչկալս խորանաց, (1814։ յ2 Յունվարի)։ Գնացին Փոխանորդն Հայոց և ոմանք 'ի Վարդապետաց 'ի վանս Ցունաց։ զկնի բանից և շնորհաւորութեան նոր տարւոյ, խօսեցան վասն խռովութեան գիւղականաց Բեթզեհէմի և Քաղաքապետի, զի զտուգանս նոցին պահանջէր յերից վանաց։ Գնալ Հայոց 'ի Բեթզեհէմ հանդիսիւ յաւուր տօնի Ծննդեան, զի Ցոյնք ոչ գնացին։ բառնալ ըզնոր վարագոյրն 'ի սեղանոյ Ծննդեան, զոր եդեալ էին Ցոյնք, և չսահմանել անդ նորանոր իրս, և 'ի ժամ պատարագին զոր ինչ կամիցեն դիցեն՝ և ապա բարձցեն զամենայնն։ Բառնալ 'ի խորանէ անտի զթել վանդակն, և զանպետ աստիճան պատկերին։ Ցոյնք խոստացան բառնալ, թէպէտ մինչեւ ցայժմ կայ մնայ վանդակն, և 'ի ժամանակս մեր յաւելին փականս 'ի վերայ նորա։ եդին պայման չվիճել միաբանաց 'ի Բեթզեհէմ, այլ զամենայն ինչ ազդ առնել յերուսաղէմ։ Ի տօնի Ծննդեան Հայոց ըստ առաջին սովորութեան Հայոց մուտ և ել առնել յերկուց դրանց Այրին 'ի Թափօրին և 'ի վերաբերման, Ցոյնք ոչ համեցան, զի յառաջագոյն 'ի տարւոջ երկիցս միայն երթային Հայք անդ, իսկ այժմ մշանջենաւորեցին, և երկուցեալ թէ 'ի պատճառս ուխտաւորաց և 'ի պատիւ Պատրիարքին՝ մի լիցի սովորութիւն, ուստի միանգամ 'ի տարւոջ առնել խոստացան, (յետոյ զայն եւս խափանեցին)։ Աւել ածել առաջի դրան Հայոց՝ ոչ կամեցան Ցոյնք։ Կարգաւորեցին զժամանակ պատարագելոյ, պատարագել Ցունաց զկնի «Փա՛ռք 'ի բարձունս» Հայոց, նոյնպէս և Լատինաց։

Զի թէպէտ Թէոդորոս Պատրիարք ոչ գնաց 'ի Բեթզեհէմ 'ի տօնի Ծննդեան վասն խռովութեան գիւղականաց և Քաղաքապետին՝ որպէս գրեցաք, այլ առաքեաց զպաշտօնեայս ընդ ուխտաւորաց։ Եւ 'ի նմին գիշերի կախեցին Հայք լապտերս 'ի պատուհանէ առաջի դրան 'ի լուսաւորել զտեղին, Ցոյնք ընդդիմացեալ բարձին զայն երիցս և 'ի չորրորդին խորտակեցին, և դատաստան առ Դատաւորին, հակառակիլ Ցունաց բանից և յորդորանաց նորին։